

«Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 15/2

21 ապրիլի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Սուրեն Մասումյանի ներկայացուցչի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 24.02.2014 թ-ի թիվ 132 որոշման դեմ:

Ա/Ձ Սուրեն Մասումյանի ներկայացուցչի բողոքում բերված փաստարկները.

Պատահական ստանալով ՀՀ ԱՆ հարկադիր կատարման ծառայության Երևան քաղաքի պետ. եկամուտների կոմիտեի հայցերով բռնագանձման բաժնի հարկադիր կատարող՝ արդարադատության լեյտենանտ Ն.Ներսիսյանի կողմից 06.02.2015 թ-ին կայացված կատարողական վարույթ հարուցելու և արգելանք դնելու մասին որոշումը բողոքաբերը տեղեկացել է, որ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ-ի կողմից 24.02.2014 թ-ին կայացված թիվ 132 որոշման համաձայն՝ Ա/Ձ Սուրեն Մասումյանից հոգուտ պետական բյուջեի որոշվել է բռնագանձել 449.785 ՀՀ դրամ:

Սակայն, մինչև այդ որոշման կայացնելը Ա/Ձ Սուրեն Մասումյանի կմղմից վճարվել է այդ գումարը, որի վերաբերյալ որպես ապացույց, ներկայացվում են այդ գումարի վճարման անդորրագրերի պատճենները:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերը նշված որոշման մասին Սուրեն Մասումյանը և նրա ներկայացուցիչը տեղեկացել են վերջերս՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարման ծառայության վերը նշված որոշումը ստանալուց հետո, ուստի սահմանված ժամկետում բողոքարկելով այդ որոշումը բողոքաբերը խնդրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ-ի կողմից 24.02.2014 թ-ին կայացված՝ Ա/Ձ Սուրեն Մասումյանից հոգուտ պետական բյուջեի 449.785 ՀՀ դրամ գանձելու մասին թիվ 132 որոշումը վերացնել:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Սուրեն Մասումյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 24.02.2014 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են ընդամենը 449.785 դրամ, որից եկամտահարկի գծով 34.985 դրամ (տույժի գումար), պարզեցված հարկի գծով 150.811 դրամ (ապառք 48.100 դրամ, տույժ 102.711 դրամ), սոցիալական ապահովության վճարի գծով 263.989 դրամ (ապառք 132.600 դրամ, տույժ 131.389 դրամ): Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի կողմից 24.02.2014 թ-ին ընդունվել է հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 132 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Սուրեն Մասումյանից 449.785 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Նշվեց նաև, որ Շենգավիթի ՀՏ պետի և Ա/Ձ Սուրեն Մասումյանի միջև 03.08.2011 թ-ին կնքվել է պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց (այսուհետ՝ ժամանակացույց), համաձայն որի Ա/Ձ Սուրեն Մասումյանը պարտավորվել է 31.12.2009 թ-ի դրությամբ առկա 844.700 դրամ պարտավորություններից, այդ թվում՝ ապառք 545.500 դրամ, տույժ 299.200 դրամ (35.000 դրամ եկամտահարկի գծով, 102.700 դրամ պարզեցված հարկի գծով և 161.500 դրամ սոցիալական վճարի գծով), 01.09.2011 թ-ից մինչև 30.06.2012 թ-ն ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր ամիս վճարել 54.600 դրամ ապառքի գումար: Ընդ որում, Ա/Ձ Սուրեն Մասումյանի կողմից սահմանված կարգով և ժամկետներում նշված ապառքի գումարը մարվելու դեպքում 299.200 դրամ տույժի գումարն արտոնվելու էր: Իր հերթին հարկ է նշել, որ 545.500 դրամ ապառքի գումարը բաղկացած է եղել 63.900 դրամ եկամտահարկից, 294.000 դրամ սոցիալական վճարից և 187.600 դրամ պարզեցված հարկից:

Ժամանակացույցի համաձայն Ա/Ձ Սուրեն Մասումյանի կողմից կատարվել է ընդամենը 544.800 դրամի վճարում: Սակայն հարկ է նշել, որ պարզեցված հարկի գծով առկա 187.600 դրամ պարտավորության փոխարեն վճարվել է 139.500 դրամ, իսկ սոցիալական ապահովության վճարի գծով առկա 294.000 դրամ պարտավորության փոխարեն՝ 341.400 դրամ: Սոցիալական ապահովության վճարի գծով ավել վճարված գումարը ուղղվել է սոցիալական վճարի գծով առկա տույժերի մարմանը:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ ժամանակացույցով ստանձնած պարտավորությունները Ա/Ձ Սուրեն Մասումյանի կողմից ամբողջությամբ չեն վճարվել, մասնավորապես՝ սխալ հաշվեհամարին գումարները վճարվելու հետևանքով չի մարվել պարզեցված հարկի գծով առկա 48.100 դրամ ապառքի գումարը: Արդյունքում ժամանակացույցով ստանձնած պարտավորությունները համարվել են փաստացի չկատարված, որի հետևանքով չի արտոնվել նաև 299.200 դրամի տույժի գումարը, ինչպես նաև Ա/Ձ Սուրեն Մասումյանի նկատմամբ չեն կիրառվել «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր, սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ համապատասխան օրենքներով նախատեսված արտոնությունները:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 24.02.2014 թ-ի թիվ 132 որոշումը կայացվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 24.02.2014 թ-ի թիվ 132 որոշումը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**